ՍԻՕՆ

ԱՄԱԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԶԱՆ ՄԻԱՄԵԱՑ

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1876

digitised by A.R.A.R.@



ԱԽՕՏ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 1.

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒՆՎԱՐ 31
1876.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ամեն մարդոյ համար մի նշանաւոր ժամանակէտ է, յորում կ'ամփոփին յոյսեր և փափաքներ, դերքին ակնկալութիւններ և խորհուրդներ։ Մի կողմէն առաւօտեան զանգակը կը հնչէ և կը քարոզէ ժամանակի նոր շրջանն. միւս կողմէն թմբուկներ, փողեր և երգեր կ'աւետեն Նոր Տարւոյ առաջին արշալոյսն։ Մանկունք և երիտասարդք ուրախութեան աղաղակներով կողջունեն Նոր Տարւոյ գալուստն. որդիք կ'աղօթեն իրենց ծնողաց համար և Աղջեր բարեմաղթութիւններ կ'անեն իրենց իշխողներու համար։

Այսպէս ահա մի տարիէն դէպ 'ի միւսն, անցնելն մեծ նշանակութիւն ունի ամենուն համար. գահակալին համար՝ իւր գահոյից վերայ, աղքատին համար՝ իւր խրճիթին մէջ, աշխատասէր հօր համար՝ իւր գերդաստանի մէջ, գթոտ մօր համար՝ իւր զաւակաց մէջ, ծերունւոյն համար՝ իւր կթոտ զառամութեան մէջ, երիտասարդին համար՝ իւր ապագայ յուսոյ եւ ակնկալութեան մէջ, որով պիտի յառաջէ դէպ 'ի աշխարհի մրրիկներն ու փոթորիկներն։

Մեր անցեալ կեանքը իբրեւ երազ կը մնայ 'ի յետուստ մեր, մեր առաջ կը բացուի ապագան իբրեւ մի դաշտ անծանօթ, որ ծածկուած է անթափանցելի մշուշով։ Մելամաղձոտ մտքերն կը ծփան և տխուր գուշակութիւններով կը մթագնին. ուրախ սրտերն

digitised by A.R.A.R.@

պայծառ յոյսերով կը խոստան։ Ամեն ոք 'ի խնդիր է իմանալ թէ ինչ պիտի բերէ իւր համար իւրաքանչիւր օր ու ամիս։ Ամեն ոք 'ի խնդիր է գէթ իւր ապագայ յուսոյ փոքրիկ նշոյլն տեսնել խորհրդաւոր մթութեան մէջ, ինչպէս հատն ցորենոյ սառուցեալ հողոյ խորութեան մէջ։

Նոր Տարւոյ շրջանին մէջ իւրաքանչիւր ոք կը խորհի, կը մտածէ. իւրաքանչիւր ոք երկիւղիւ և յուսով կը գծէ իւր ապագայ կենաց ծրագիրը։

Քրիստոնեան եւս նոր կենաց ընթացք կը սկսի. նա եւս լի է յուսով և երկիւղիւ։ Բայց ինչ զգացմունքով կը դիմաւորէ նա Նոր Տարին. ինչ մտածութեամբ կը դիմէ դէպ 'ի խորհրդաւոր և անծանօթ ապագայն։ Նա մի առանձնութիւն կ'որոնէ, նա կը փափաքի իւր ուշքն ու միտքն ամփոփել, և երբ կ'առանձնանայ՝ կը բարձրացնէ ահա իւր սիրտն իւր բաղուկներուն հետ առ Ամենակարողն, առ Մարդասէրն և կը մրմնջէ այսպէս. «Զեմ արժանի ես քո անհուն ողորմութեանդ և անքաւ սիրոյդ, զոր ծաւալեցիր իմ վերայ, ով Տէր։ Ինչ որ եմ ես, և ինչ որ ունիմ, ամենն դու տուած ես եւ քեզ պարտական եմ բոլորին համար. դու պահպանեցիր իմ կեանքս. դու առաջնորդեցեր ինձ այնպիսի վտանգներու մէջէն, որոնք իսպառ անծանօթ էին ինձ։ Դու ընդ իս էիր, դու ամենեւին չը թողիր զիս, երբ տրտմութիւնք և հեծութիւնք ծանրացան իմ վերայ։ «Ես ննջեցի և 'ի քուն եղէ», բայց դու միշտ հսկեցիր, միշտ քո հովանին տարածեցիր իմ վերայ, կրզգամ ես եւ կը խոստովանիմ, որ ինչ անցքեր որ անցին իմ գլխէս անցեալ տարւոյն մէջ բոլորն իմ բարութեան համար էին, և ինչ որ պիտի անցնին ապագային մէջ, դարձեալ իմ բարութեան համար են. վասն զի այն Լաւնակը, որով դու կը կառավարես աշխարհս համօրէն, իմաստուն է և հրաշալի։ Այո՛, ես եւս կը հպատակիմ տիեզերական այս սուրբ Օրէնքին, որ յաւիտենական է և անսասան, ինչպէս քո Իմաստութիւնդ։ Ես եւս տիեզերական մարմնոյ մի անդամն եմ, և ինչ աղէտներ որ ինձ պատահած են, ինչ թշուառութիւններ որ զիս խոցած և սրտէս արիւն բղխեցուցած են, նոքա եւս բաժին են ամեն մահկանացուաց, զոր պէտք է կրել սիրով և հնազանդութեամբ։ Վասն զի կը խոստովանիմ և կը հաւատամ, Տէր, որ դու ամեն բան բարի ստեղծած ես և բարութեան համար ստեղծած ես։

Ո՛վ Տէր իմ և Աստուած, որոյ ողորմութիւնդ անչափ է և գթութիւնդ անքաւ. ո՛վ Հայր, որ բարութիւն ես բովանդակ, մի՛ թողուր զիս, մի՛ թողուր և զայնոսիկ, որք սիրելի են ինձ։ Մի՛ թողուր զմեզ, երբ մենք հեռանամք և մոլորիմք իսկ 'ի քէն։ Վասն զի քո զաւակներդ եթէ խոտորին իսկ ուղղաճանապարհէն, դարձեալ կը դառնան, արտասուօք կընկնին ոտքերդ եւ կը հայցեն ողորմութիւնդ։

Այո՛, ո՛վ Տէր, դու որ պահպանեցիր զիս ընդ երկար, անշուշտ պիտի պահպանես զիս դարձեալ։ Այս վստահութեամբ կը բարձրացնեմ ահա առ քեզ բաղուկներս։ Ինչպէս սիրով լցուած տկար մանուկն յոգնութերս իւր մօրն կը դիմէ, նոյնպէս և ես կը դիմեմ առ քեզ։ Կ'ուխտեմ կատարել քո Որդւոյ և Փրկչիս Յիսուսի Քրիստոսի պատուէրներն, որ մեզ քարոզեց քո Խօսքն։ Ես յոյս ունիմ քեզ վերայ, ո՛վ Տէր. վասն որոյ և բան մի չեմ խնդրեր քեզմէն, վասն զի դու մի այն գիտես թէ ինչ է բարի ինձ համար և իմ մերձաւորաց համար. և

digitised by A.R.A.R.@

դու կը տաս անշուշտ ինչ որ պատշաճ և օգտակար կը դատես մեր փրկութեան համար։

Ո՛վ Տէր, դու գիտես զամենայն, դու գիտես թէ ինչ իրաձեր և փափաքներ իմ սիրտս կը յուզեն, դու գիտես թէ ինչ խորհուրդներ կ'անցնին իմ մտքէս։ Դու գիտես արդէն և հարկ չը կայ մի առ մի յիշել քո առջեւ. այլ միայն մրմունջ 'ի բերան և արտասուս յաչս կը խնդրեմ 'ի քէն, որ կատարես իմ ամէն բաղձանքներս, իմ ամէն սուրբ ցանկութիւններս, յորոց կախուած է իմ փրկութիւնս և երջանկութիւնս։

Բայց ո՛չ ո՛չ, ինչու վրիպեցայ. ինչու այսպէս խօսքեր արտասանեցի։ Մի թէ ես առաւել իմաստուն եմ քան զԱմենիմաստունն. մի թէ կարող եմ ես ճանաչել և սահմանել թէ ինչ է իմ երջանկութիւնս, ես որ կարող չ'եմ մինչեւ անգամ իմանալ թէ ինչ պիտի պատահի ինձ մի վայրկեանէն յետոյ։ Ո՛չ ո՛չ, ո՛վ Հայր ամենատես և բարեգութ, ես միայն խրբեւ անգէտ զաւակ կը թոթովեմ իմ բաղձանքներս. բայց դու միայն ես՝ որ գիտես թէ ո՞ն բարի է ինձ համար, և զայն միայն կը կատարես, որ իսկապէս կ'առաջնորդէ ինձ յերջանկութիւն. կը լռեմ ես, ո՛վ Տէր և զիս քեզ կը յանձնեմ, իմ մերձաւորներս քո Նախախնամութեան կը յանձնեմ. մենք քեզ կը պատկանիմք, դու ես միայն մեր Աստուածն և առաւել գիտես զկարիս մեր քան զոր խնդրեմք և իմանամք »։

Ուրեմն, սիրտ իմ, փարատէ քեզ մէն ամէն անօգուտ հոգսեր, ամէն ունայն յոյսեր և վստահութեամբ սպասէ ամենաբարի Նախախնամութեան, որ կը հակէ բոլոր տիեզերաց վերայ։ Մի տագնապիր, շատ մի յուսար աշխարհային վերայ, մի նեղիր. վասն զի թէ՛ չափազանց մտածութիւնդ և թէ՛ չափազանց յոյսդ կարող են վատ տրամաբանութիւն ունենալ քեզ վերայ։ Երբ շատ տագնապես և փափաքիդ չը հասնիս՝ կը յուսաբեկիս և կը լքանիս։ Երբ շատ յուսաս և յուսոյդ կատարումն չը տեսնես, կը դառնանաս եւ կը յուսահատիս։ Վասն զի անկատար մնացած յոյսերն միշտ վերք կը թողուն մարդոյ սրտի վերայ և միշտ կը կարձեն նորա յառաջադիմութիւնը։

Ուսսի պէտք չէ շատ յուսալ. պէտք չէ շատ ակնկալել, որպէս զի երբ թըշուառութիւններ և աղէտներ թափին մեզ վերայ՝ կարողանանք համբերել և տոկալ։ Այն մարդը, որ շատ պայծառ յոյսեր կը սնուցանէ սրտին մէջ, նա միշտ կընկճի՝ երբ յանկարծ փոթորիկներ կը դիզուին, կայծակ կ'որոտայ, շանթեր կը տեղան և ինքն փոխանակ անսասան մնալու՝ կը սասանի, կը շուարի և կը տատամսի։ Իմաստուն Քրիստոնեայն կը դիմէ դէպ 'ի ապագայն ամենայն պատրաստութեամբ զբահաւորուած, ինչպէս քաջ զինուոր, որ կը յառաջէ դէպ 'ի անծանօթ թշնամին։ Իմաստուն Քրիստոնեայն աչքերն յերկինս յառած՝ թէ՛ վիշտ և թէ՛ բարիք ուրախութեամբ կ'ընդունի Տիեզերքն կառավարող հզօր Զեռքէն։ Թող յաջորդ ամիսը անակնկալ ուրախութիւններ բերէ նորա համար. թող իւր սիրելւոյն դադարն ներկայացնէ իւր աչաց, նա երկուսն եւս սիրով կ'ընդունի։

Այն ուրախութիւններուն միայն յուսա, զորս պատրաստած ես քո առաքինութեամբ եւ կենաց ուղղութեամբ։ Այսպիսի ուրախութիւններն ու յոյսերն գրեթէ միշտ անվրէպ են։ Քո գործած առաքինութիւններդ անպատճառ ուրախութիւններ պիտի բերեն քեզ համար նոյն իսկ այս աշխարհիս մէջ։ Երբ դու յաղթես քո

digitised by A.R.A.R.@

վատ բնաւորութեանդ, երբ դու ուղղես քո սիրաներդ ու թերութիւններդ, իմացիր որ այն մարդիկն իսկ պիտի ստիպուին զքեզ սիրել եւ պատուել, որոնք այսօր կ'ատեն եւ կ'արհամարհեն զքեզ։ Քո ձեռք բերած լաւ յատկութիւններդ, քո մարդասէր ձեւերդ, քո առ մերձաւորս ունեցած անշահասէր փափաքներդ, քո աղոց վերայ բարի խօսելու բնաւորութիւնդ, քեզ յանձնուած գործերուդ մէջ ունեցած արիութեան ու եռանդդ, ամեն գեշ և անմաքուր բաներէ ունեցած քո զզուանքդ և հեռացումդ, միով բանիւ քո արդարասէր վարքդ ու կենցաղդ՝ պիտի դրաւեն առ քեզ այն անձանց հաճակրութիւնն, որոնք այսօր ատուն աչքի կը նային քեզ։ Ի՞նչ բանի մէջ կը կայանայ մարդոյ երջանկութիւնն, եթէ ոչ գոհ լինիլ ինքնին և յինքն գրաւել ամեն առաքինի և բարի մարդոց սէրն ու բարեկամութիւնն։ Եթէ երջանիկ չես, ի՞նչ կարգելու զքեզ երջանիկ լինելու։ Ո՛վ որ թողու այն մոլորութիւնն, որք իւր խիղճն կը կրծեն և զայլս կը զզուեցնեն. ով որ իւր հանգստութիւնը՝ իւր խղճի եւ Աստուծոյ մէջ կ'որոնէ. ով որ իւր երջանկութիւնն իւր յատուկ կամքէն եւ յատուկ աշխատանքէն կրսպասէ և ոչ թէ յիմարաբար ուրիշներէն, այնպիսին կը գտնէ երջանկութիւն և հանգստութիւն։ Պէտք է ուրեմն իւրաքանչիւր ոք վերանորոգէ իւր կեանքը. պէտք է քաջութեամբ ձեռնարկէ սոյն բարի գործոյն։ Այս վերանորոգութեան մէջ է մարդոյ երջանկութիւնն։

Մի յուսար ուրիշ պատուոյ, ուրիշ բարեկեցութեան, բայց միայն ինչ որ կարող ես քո կամքով և քու ջանքով ձարել։ Մի ապաւինիր աղոց օգնութեան, ոչ բարեբաղդ կամ կոյր դիպուածներու, ոչ անակնկալ ժառանգութեան, ոչ վիճակախաղութեան շահու, որոնք կարող են իբր թէ յանկարծ հարստացնել զքեզ։ Մի ապաւինիր ամենեւին այսպիսի անակնկալ բերմունքներու. այլ ապաւինիր քու ջանիցդ և Աստուծոյ օգնութեան. նա որ բացարձակապէս իւր ջանից կը վստահի և ուրիշներէն օգնութիւն չակնկալէր, այնպիսին միշտ մեծ է, ազատ է և ազնիւ։ Ինչքա՞ն կամիս ուրեմն մեծանալ յաչս աղոց եւ կամ դիրքել հարստութիւն. ոչ ապաքէն քո ունայնասիրութիւնդ շոյելու և փայփայելու համար։ Անարժան ես դու, եթէ քո գաղտնի հպարտութիւնդ գոհացնելու համար կը փափաքիս որ Աստուած հրաշիւք աշխարհիս կարգը փոխոխէ։ Նա որ ոչ գոհ է և ոչ երջանիկ իւր յատուկ աշխատութեամբ և ճարտարութեամբ ձեռք բերած բարիքէն, այնպիսին անարժան է որ և իսկ յաջողութեանց և շնորհաց։

Միայն այն բաւականութեանն ըստպասէ այս աշխարհիս մէջ, ինչ որ կարող ես ձեռք բերել քո խոհեմ և առաքինի վարքովդ։ Միշտ քո անձին դիմէ. վասն զի նախ Աստուած և ապա դու ես քո երջանկութեան արարիչն. այս նպատակիս համար է որ Աստուած տուած է քեզ հանճար, բանականութիւն և իմաստութիւն։ Փա՛խիր, հեռացիր ամեն յանդուգն և վատանգաւոր ձեռնարկութիւններէ. կարգ, կանոն եւ տնտեսագիտութիւն պահպանէ գերդաստանիդ մէջ, խոհեմութեամբ ընտրէ բարեկամներդ, արիութեամբ և եռանդեամբ օգուտ քաղէ ամեն դէպքերէ, որք կարող են պատուաւորկերպիւ ընդարձակել ձեռնարկներդ եւ գործերդ։ Խոհեմութեամբ վարուէ այն անձանց հետ, որոնք քեզ պէս չեն խորհիր. նաեւ նո-

ցս հետ, որոնք ուրիշ կարգի կը պատ-
կանին, և երբ այս զգուշութիւններն
ունենաս, ընկերական յարաբերու-
թեանց մէջ յուզուելու առիթներ չես
ունենար. քո կենցաղավարութեան
եւ աշխատանաց շրջանակդ իբրեւ մի
խաղաղ դրախտավայր կը լինի, և աւ-
ելի տեւական ուրախութիւն և եր-
ջանկութիւն կը ճաշակես։

Ժամանակն համարէ իբրեւ մի չը
սերմանուած դաշտավայր, ուր լինքին
պիտի չի գան ոչ բաղդն և ոչ անբաղդու-
թիւնն. պէտք է նախ երկիրը մշակել
յատուկ ձեռքերով և ապա սերմն ցա-
նել։ Ինչ որ կը սերմանես՝ զայն կը հնձես. աղօթէ և աշխատէ և Աստուած
կ'օրհնէ աշխատանքդ։ Ա՛խ, որչափ
բարի է Աստուած, որչափ անհուն է
նորա բարութիւնն, նա կ'ուզարկէ
քեզ այնպիսի ուրախութիւններ, զոր
չ՝ խնդրած ես և ոչ նախատեսած։

Մի տագնապիր, շատ անհանգիստ
մի լինիր։ Ապագայ չարիքներէն վախ-
նալն աւելի մեծ չարիք է քան թէ նոյն
իսկ չարիքն։ Զարեաց կամ աղէտից եր-
կիւղը աւելի շատ կը տագնապէ ըղ-
մարդ՝ քան թէ նոյն իսկ աղէտն ու
թշուառութիւնն։ Ապագայ աղէտնե-
րէն երկնչելով առողջութիւնդ կը խան-
գարես և կը վատթարես, քաղցր ու-
րախութիւններդ կը դառնացես, զորս
կարող էիր ներկայիս մէջ վայելել. շատ
վատ սովորութիւն է այն սովորութիւ-
նը, որոնք ապագայէն կը սոսկան եւ
կ'երկնչին։ Ապագայէն են, որոնք բա-
ւականութիւն կըզգան անդադար տրը-
տընջալ, դանգատել և ամեն ժամա-
նակ անհանգիստ լինիլ։ Ապագայէն
են, որք առանց կարեւորութեան ե-
բեւակայական տանջանքներ կըստեղ-
ծանեն իրենց համար, կը ցաւին, կը
վշտանան, և, իբրև յիմարներ, ներկայի
իրական ուրախութիւններն կ'ոչնչաց-
նեն ապագայի ոխսոր երազներով։

Մի տագնապիր, շատ անհանգիստ
մի լինիր. անհանգստութիւնն քաջու-
թիւնդ կը բառնայ. կը լքանիս և դը-
ժուարութեանց կը մատնուիս։ Մի ա-
սեր դու քեզ, թէ անհանգստութիւ-
նը և հոգսերդ խոհեմ նախատես-
թեան հետեւանքներ են. վասն զի խո-
հեմ մարդը հանգիստ սիրտ ունի, և
խաղաղութեամբ կը ճաշակէ ներկայի
ուրախութիւններն. աւելի լաւ օրե-
լու յուսով կարգելու նա նորածին մը-
տատանջութիւններն և երբ նախատե-
սեալ դժբաղդութեան ժամը հնչէ,
աւելի արիութիւն ցոյց կը տայ և նաև
կը յաղթէ դժբաղդութեան։ Նաւորդն
Ովկիանոսի կոհակներուն վրայ կը
ցնծայ անվրդով, երբ հողմն յաջողակ
է և արեգակն պայծառ. պէտք է ար-
դեօք սոսկայ նա փոթորիկ կամ աղեկո-
ծութիւն նշմարելէ, մինչդեռ ամենայն
ինչ խաղաղ է իւր շուրջն։ Բայց եր-
կինքն կը մթագնի, կատաղի քամին կը
հողմակոծէ զայրացեալ Ովկիանոսի մա-
կերեւոյթն, նաւի առագաստներն ծը-
ւէն ծուէն կը պատառէ և սոսկալի նա-
ւաբեկութիւն կըսպառնայ։ Ա՛յսպէ-
սի պահուն մէջ երկիւղն ու թուլու-
թիւնն աւելի կը փութացնեն կորուս-
տն։ Ա՛յսպիսի պահուն մէջ անվեհեր
նաւորդն իւր յոյսը կը դնէ Աստուծոյ
վերայ, որ կը տիրէ թէ խաղաղ ջրե-
րուն և թէ փոթորիկներուն, կը բաղ-
մապատիկ իւր քաջութիւնն, կը վազէ
ուր անհրաժեշտ է իւր ներկայութիւ-
նը, կը մարտնչի հողմերու և կոհակնե-
րու հետ և իւր համարձակութեամբ,
խոհեմութեամբ և անվեհերութեամբ
կը խուսափի վտանգէն։

Մի տագնապիր, շատ անհանգիստ
մի լինիր։ Եթէ մինչեւ ցայսօր կատա-
ղեալ ալիս երջանիկ չես եղած, խորհէ,
որ աշխարհիս բաներն անդադար կը

փոխոխին։ Եթէ ներկայ վիճակդ ոչ խուբ է, քաջալերուիր, վասն զի միշտ այնպէս պիտի չը մնայ։ Մի թէ տակաւին չ'ուսար դու փորձով, որ աշխարհիս մէջ ոչ տեւական ուրախութիւն կայ և ոչ տեւական տրտմութիւն։ Եթէ մթութիւն կը շրջապատէ զքեզ այսօր, մխիթարուիր, միքանի օրէն յետոյ լոյս պիտի փայլի. քանզի ոչ անբաղդութիւնն տեւական է և ոչ բաղդաւորութիւնն։ Ի՞նչու պէտք է տրտմիլ, երբ արեգակն 'ի մայր կը մտնէ։ Մի թէ յետ գիշերոյն չը կայ այլ եւս արշալոյս և առաւօտ։ Քննէ՛ վիճակդ, որուն մէջ այժմ կը գտնուիս, կշռէ՛ մտատանջութիւններդ և ապա ասա՛ ինձ, մի թէ կորսուած է ամեն յոյս։ Ո՛չ երբէք։ Դիցուք թէ կորսուած իսկ է ամեն բաղդաւորութիւնդ. մի թէ զԱստուած եւս կորսուած ես. ո՛չ ո՛չ, ուրեմն ինչու՞ կը յուսահատիս, ինչու՞ կը լքանիս։

Մի տագնապիր, շատ անհանգիստ մի՛ լինիր. վասն զի Աստուած միշտ պիտի քեզ հետ լինի. եւ եթէ ամեն յոյս ամեն բաղդաւորութիւն վերջացած իսկ համարուի քեզ համար աշխարհիս վերայ, դարձեալ անանց պիտի մնայ Աստուծոյ բարութիւնն, որ անսպառ է և աղբիւր ամեն երջանկութեան և բարեաց։ Եթէ մահն յաւիրջ տակած է մի անգին գանձ՝ քո սրտիդ սիրելի էակներէն մին, ինչու՞ պիտի շարունակ լաս և կոծիս սիրելւոյդ շիրմին վերայ։ Դարձուր աչերդ դէպ 'ի յաւիտենականութիւնն։ Աստուծոյ մատն կ'առաջնորդէ քեզ այն սիրելի էակին մօտ, յորմէ բաժնուեցար աշխարհիս վերայ։ Եթէ մարդկային անիրաւութիւնն հարուած տուած է քեզ. եթէ անզգայ անձանց անդթութիւնն վիշտ հասուցած է քեզ. եթէ պատերազմի ասպատակութիւններն զրկած են զքեզ քո ը՛ռչից մի մասէն և կամ ամբողջ ինչքէն, քաջալերուիր, յոսան կայ, փոխարինող արդարութիւն կայ, որ կը թագաւորէ աստեղյոց վերայ և քո արտասուաց կաթիլներն իսկ կը հաշուէ։

Մի տագնապիր, շատ անհանգիստ մի՛ լինիր. մտածէ, որ այն վշտերն, որք ծանրացան քեզ վերայ անցած տարւոյն մէջ և տակաւին կը տրտմեցնեն զքեզ ու կը բառնան ամեն յոյս լաւագոյն աւուրց, մտածէ՛, որ այն վշտերն միմիայն նպատակ ունէին քո քրիստոնէական հաւատդ փորձել եւ քեզ այն ճանապարհն ցոյց տալ. ընդ որ պիտի ընթանաս տպագային մէջ։ Դու ստեղծուած ես ուրիշ աշխարհի համար և ոչ թէ միայն սոյն երկրաւոր կենաց վաղանցուկ ցնորից համար։ Մի միայն հասուն առաքինութեամբ, փորձեալ իմաստութեամբ և հզօր ու մեծ հոգւով իրաւունք պիտի ստանաս դու երկնաքաղաքն թեւակոխել։ Վրէ՛ տեր և տառապանքներ կրելով, զանազան աղէտից և դժբաղդութեանց հետ մարտնչելով միայն կարող եմք վարժել և զօրացնել մեր հոգին։ Տառապեցա՞ր, չարչարուեցա՞ր. շատ լաւ. ցոյց տուր ինձ թէ ի՞նչ ուսար տառապանաց դպրոցի մէջ։ Եթէ արի գտնուեցար եւ փորձութեան բովէն ընտիր ելար, կարող ես աներկիւղ դիմել դէպի ապագայն և արհամարհել ամեն աղէտներն, ինչ որ կարող է նա քեզ բերել։ Կարող ես աչքերդ բարձրացնել դէպ 'ի երկինքն և աղաղակել յուսալիր ցընծութեամբ. «Տէր ետ և Տէր էառ. եղիցի անուն Տեառն օրհնեալ»։

Միայն այն չարիքներէն և աղէտներէն վախցիր, զորս քո սխալմունքով կարող ես քեզ հասցնել. մարդ ամենէն աւելի պիտի երկնչի իւր սխալմունքներէն, իւր մոլորութիւններէն,

digitised by A.R.A.R.@

իւր անխոհեմու թենէն, իւր կիրքերէն, Ապագայէն մի՛ վախնար ուրեմն, այլ քեզմէն։ Ապագան Աստուծմէ կը գայ մեզ. իսկ մարդոյն պատահած թշուառութեանց և տառապանաց աղէտներն նոյն իսկ մարդէն կուգան։ Ապրէ՛ իբրեւ Քրիստոնեայ եւ հաւատա՛ որ ինչ որ պատահի քեզ՝ դարձեալ պիտի երջանիկ լինիս։

Եթէ քեզմէն երկիւղ չ'ունիս, ուրիշ բանէ ամենեւին մի՛ վախնար։ Ե՛լ առնական եւ քրիստոնէական վստահութեամբ անտանելի և տխուր վիճակէդ։ Խորհէ՛ լաւ միջոցներու վերայ, օգուտ քաղէ՛ ամեն պարագաներէ, ամիսիսի՛ բոլոր զօրութիւնդ, եւ որչափ կարելի է ջանա՛ կացութիւնդ բարւոքել։ Եթէ այժմ պակսի, եթէ ամեն բան չը կարողանաս գործել, վստահ կաց, որ մնացածն Աստուած կը գործէ։

Այ՛, դու կ'օգնես ինձ, ո՛վ Երկնաւոր Հայր, դու որ փոշւոյ մէջ սողացող մրջիւնի պիտոյքն անգամ կը հոգաս։ Լի յուսով պիտի ապաւինիմ քեզ, ո՛վ Տէր, և ինչ որ պատահի ինձ Նոր Տարւոյս ընթացքին մէջ, երբէք պիտի չը թողուս զքեզ, երբէք պիտի չը խախտեմ իմ յոյսս. և ինչո՞ւ պիտի խախտեմ. ինչո՞ւ պիտի երկնչիմ, քանի որ գիտեմ, որ դու ոչ միայն ներկայն այլ և ապագայն մէջ ես։

Ես պիտի սկսիմ սոյն Նոր Տարին աւելի խոհեմութեամբ, աւելի իմաստութեամբ և աւելի երկիւղածութեամբ, պիտի սկսիմ Նոր կեանքով և Նոր գործունէութեամբ։ Ինչ զըժուարութիւն որ պատահի ինձ, ինչ զոհողութիւն որ առջեւս ելնէ, ես պիտի ջանամ միշտ չար միտումներուն յաղթել և յառաջել բարւոյ թագաւորութեան մէջ։

Եւ եթէ սոյն Տարւոյ կատարածին չը հասնիմ. եթէ սոյն Տարին վերջինն լինի ինձ համար, կը յուսամ որ ոչ միայն բարեկամաց սրտաստուքներն, բայց նաև իմ խղճս վկայ կը կանգնին քս առջեւ. որ քս գծած ճանապարհին վերայ մեռայ։ Եթէ սոյն Տարին իմ մահուան տարին լինի, անշուշտ պիտի լինի նաեւ լաւագոյն աշխարհն մտնելու տարի։ Փոյթ չէ ուրեմն, եթէ ես մեռնիմ, բաւական է միայն որ ծիծաղաժպիտ յուսով պիտի դիմեմ դէպ 'ի յաւիտենականութիւն, ուր կը սպասեն ինձ նոր ուրախութիւններ քս աբարչագործութեան անհուն հրաշալեաց մէջ, ուր ոչ ամբ կը նորոգին և ոչ դարք կը փոխուին, այլ կը թագաւորէ համակ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

ԿՐԹԱՐԱՆ
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

ԳԱՍ Ի·

ՏԱՃԱՐԻ ՔԱՐԵՐ (*)

Մինչեւ ցարդ բացատրուած խօսքերն կ'առաջնորդեն մեզ Յիսուսի Քրիստոսի խօսքերու մի կարեւոր բացատրութեան։ Կան շատ մարդիկ, որք կ'արհամարհեն նիւթական մեծութիւնն և տեսանելի շքեղութիւններն։ Այս շատ լաւ. բայց ի՞նչ բանի վերայ կը դարձնեն նոքա իրենց նայուածքն։ Ի՞նչ առարկայի վերայ է նոցա զարմացումն։ Եթէ իմացականութեան, կամ, ինչպէս սովոր են անուանել, հոգւոյ վերայ է նոցա զարմացումն, պէտք է

(*) Շարունակութիւն և վերջ։

digitised by A.R.A.R.@

խմեցնող որ Յիսուսի Քրիստոսի կշռամ բանքն այսպիսեաց եւս կը վերաբերի, ասցա եւս կ'ասէ նա. « Ա՞յս է որ կը զարմացնէ զձեզ. այս բանին կը նայիք »:

Իմացականութիւնն կամ միտքն, իւր բոլոր արժանաւորութեամբ, այնչափ բարձր չէ նիւթէն որչափ ցած է մարդասիրութիւնէն: Այն տարբերութիւնն կամ հեռաւորութեան չափն յառաջ բերելով մենք նպատակ չունինք բնաւ բաժնել, ինչ որ Աստուած միացուցած է: Մենք գիտեմք որ սրբութիւնն, կամ, ինչպէս ամենք սովոր են անուանել, բարոյականութիւնն կարող չէր գոյութիւն ունենալ առանց իմացականութեան, վասն զի այն էակն՝ որ չը խորհիր բնաւ, բարոյական էակ չէ: Մենք պէտք է հաւատանք նմանապէս, որ իմացականութիւնն միացած է գործարաններու հետ. վասն զի գործունէութեան ժամանակ ինքն եւս մի գործարան է. այնպէս որ մարդն իւր լրութեամբն առնելով՝ է մի էակ միանգամայն ֆիզիկական, իմացական եւ բարոյական: Եթէ այս լրութենէն կամ ամբողջութենէն մին կամ երկուան բառնանք, մարդն այլ եւս մարդ չը լինիր: Սակայն որչափ որ իմացականութիւնն սերտ միացած է մարմնոյ հետ, այնու ամենայնիւ կարող ենք ասել, որ մարմինն ու իմացականութիւնն իրարու համանման չեն, իրարմէ առաւելութիւն ունին: Այսպէս եւս պիտի չը զարմանաք բնաւ, երբ ասենք որ բարոյական սկզբունքն, թէ եւ սերտիւ միացած է իմացական սկզբունքին հետ, բայց միշտ բարձր է իմացականէն:

Իմացականութեան յարաբերութիւնն բարոյականութեան նկատմամբ նոյն է, ինչ որ է մարմնոյ յարաբերութիւնն իմացականութեան նկատմամբ: Մարմինն է գործի իմացականութեան եւ իմացականութիւնն կամ միտքն է գործի բարոյականութեան: Կարող ենք ասել նաեւ, որ մարմինն ու իմացականութիւնն թէ՛եւ իրարու անհաւասար, բայց թէ՛ մին եւ թէ՛ միւսն երկաթեանն իմիսաին, երկու գործի են բարոյականութեան: Ուրեմն բարոյականութիւնն է նպատակ եւ մարմինն ու իմացականութիւնն են միջոց: Արդարեւ կարեւոր միջոցներ են. բայց ընդնմին եւ պարզ միջոցներ: Ա յսպէս խոսելով ես տակաւին այնչափ հեռի չեմ երթար, ինչպէս գնացած է Ս. Դիրքն, ասելով. « ՅԱստուծոյ երկիր եւ զպատուիրանս նորա պահեա, այս է մարդն բովանդակ »: Եթէ այս է բովանդակ մարդն, հապա ինչ է միւս մնացեալն. սակայն մենք կը հասկնանք Սաղմոսի միտքն. բովանդակ մարդ ասելով կը յայտնէ նա միանգամայն մարդոյ վախճանը, նորա գոյութեան պատճառն ու նպատակն, նորա փառքն առաջի Աստուծոյ:

Աստուածային Սէրն Յիսուս Քրիստոս, այն գինն՝ որ հատոյց մեր փրկութեան համար, նոյն գնով անշուշտ պիտի գնէր կամ փրկէր թէ՛ մեր իմացականութիւնն կամ միտքն եւ թէ՛ մեր սիրտն: Բայց ինչ էր մեր Փրկչի բուն գաղտնեան նպատակն: Եկաւ նա արդեօք քաւել մեր մոտոյ դատողութեան սխալներն ու մոլութիւններն, թէ՛ քաւել մեր կամոյ զառանցանքներն: Եկաւ նա արդեօք ուղիղ խորհիլ ուսուցանել մեզ, թէ՛ ուղիղ գործել: Կամեցաւ նա արդեօք իմաստունները առնել զմեզ, թէ՛ սուրբեր: Այն հարցմանց պատասխանն, լիովին կը հաստատէ այն ճշմարտութիւնն, զոր կ'առաջարկեմ ձեզ. եւ ես վստահ եմ, որ ձեր խիղճն եւս պիտի վկայէ այս բանին: Մարդոյ փառքն կամոյ

digitised by A.R.A.R.@

տաղղութեան եւ բարեաց գործածութեան մէջ է. իսկ իմացականութեան փառքն է ծառայել բարոյական օրէնքի յաղթանակի համար, այսինքն, թէ մարդոյ մարմինն և թէ միտքն միակ նպատակ պիտի ունենան բարոյականութեան սկզբունքն թագաւորեցնել։

Արդ՝ հարկ չէ ամենեւին հաստատել այսօր երկար փաստերով՝ թէ իմացականութիւնն 'ի վեր է քան զնիւթն, թէեւ նիւթն յաղթող կը հանդիսանայ շատ տեսակէտներու մէջ և նաեւ շատ տեսակէտ գրուածոց մէջ. բայց տեսելի հարկ է գիտութեան և մտաց հպարտութեան կամ իմացականութեան բուռն եւանդն ուանձել։ Պէտք է ասել ինչպէս նիւթապաշտներուն, որ իրենց նիւթապաշտութիւնն ապականութիւն է, նոյնպէս պէտք է ասել եւ իմացականութեան սիրահարներուն, որ իմացականութիւնն 'ի վեր դասել քան զբարոյականութիւն՝ ապականութիւն է։ Պէտք է ասել որ ամենէն մտաւոր մարդն, եթէ առանց բարոյականութեան է, ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմացական կենդանի։ Պէտք է ասել, որ անբարոյական իմացականութեան յաղթանակներն ամենեւին տարբերութիւն չունին՝ անասնական ուժոյ եւ մարմնաւոր զօրութեան յաղթանակներէն։ Պէտք է ասել, որ մտաց և հանճարոյ վերայ չափազանց զարմանալն, նոյն սկզբունքէն կը բղխի, ինչ որ է ցանկութիւնն աչաց, զոր Աստուածն կը դատապարտէ ընդ ցանկութեան մարմնոյ և ընդ ամբարտաւանութեան սատի կենաց։

Յաւէտ սրտի պիտի ասեմ, որ մի քանի երկիրներու մէջ միտքն և հանճարն մեծ առաւելութիւն ստացած են, եւ վարուց ապականութիւններն ընդ քողով ծածկուած։ Իմացականութեամբ կամ մտքով չը զարգացած մարդն թշուառ եւ ողորմելի կը համարուի ընկերութեան մէջ. իսկ մտացին և հանճարեղն թշուառ չեն, եւ ամեն տեղ կ'գրոնուին։ Սակայն ուրիշ աչքով կը նային այն մարդոյ վերայ, որ վատ վարք չունի, և ամենեւին վատ օրինակ չը տար այլոց։ Մինչեւ անգամ կը համարձակին ասել որ կանոնաւոր բարոյականն անհաշտելի է հանճարոյ հետ եւ թէ շատ հանճար և շատ առաքինութիւն ունենալու համար շատ բան պէտք է անել։

Ներկայ ժամանակս մտաւորական յաղթանակներու արբեցութիւնն այնչափ սարսափ կ'ազդէ ինձ, որչափ ընդհանրապէս սարսափ կ'ազդէ նիւթական վայելչութեանց անձնատուր լինելու միտումներն։ Այս պատճառաւ ահա կը փափաքիմ ձեր հայեցուածքն դէպ 'ի այն կողմն դարձնել, ուր կամեցաւ դարձնել մեր առաքելական Վարդապետն իւր տչակիրուոյ նայուածքն։ Ո՞վ աղքատ սրտի Աւետարանի. ո՞վ խոնարհ կին, զոր Փրկիչն աշխարհի մի խօսքով յաւիտեան հրաշակեց աշխարհի վերայ. ո՞վ երջանիկ կին, ձգէ՛ դարձեալ քո լուսոյն. ձգէ՛, թափէ՛ արտասուացդ հետ խառնուած քրտինքդ մարգասիրութեան գանձանակին մէջ։ Ասա՛ մեզ, եթէ համեստութիւնդ կը ներէ քեզ, ասա՛ մեզ, ինչ հոգեկան շարժում էր այն շարժումն, որ սիրտդ յուզեց եւ աղքատ ձեռքդ շարժեց, ինչ որ ունէիր, ուրիշ աղքատներու նուիրելու։ Մի լոկ լուսոյ չէր այն, այլ քո բոլոր կեանքդ էր։ Մեր աչքերն կշտացած են երեւելի տաճարի շքեղութենէն և մեծութենէն. բայց մեզ քո հոգւոյդ սրբավայրն, քո հոգւոյդ տաճարն, ո՞վ կին, և ցոյց մեզ ուրիշ շքեղութիւններ։ Ցոյց մեզ քո վշտերդ, որոնք ո-

digitised by A.R.A.R.@

զորմածութեան փոխուած են. ցոյց մեզ քո թշուառութիւնդ, որ աչք կը տայ քեզ այլոց թշուառութիւնն տեսնելու։ Այնպէս արա, որ կարդանք քո սիրտդ, որ մարդասիրութեան պատուէրն իրեն կը վերագրէ, մինչդեռ այն աւելի հարուստներուն կը վերաբերի քան թէ աղքատներուն։ Ասա մեզ, ինչ քաղցր երախտագիտութիւն կը զգաս առ Աստուած, որ քեզ մի լումայ տուած է։ Ցայտնէ՛ մեզ աշխատանացդ այն դաղտնիքն, որով ստացած ես այն լումայն. այն աղօթքն, որով ձեռք բերած ես զայն. այն երջանիկ և վշտալի կեանքն, այն յոգնութիւններն, այն անձնամոռ ժուժկալութիւնն, որով պահպանած ես զայն լումայն։ Մասն և բաժին հանիր մեզ այն փառաւոր հաղորդակցութիւնէն, որով ճաշակած ես Աստուծոյ մխիթարութիւնն քո չքաւորութեան մէջ։ Ա՛խ, կը փափաքիմ ես, կարօտ եմ ես, աչքերս հանգստացնել աշխարհիս անցաւոր շքեղութեանց նայելէն և ականջներս անդորրացնել աշխարհիս աղաղակներն ու բամբիւններն լսելէն։ Իշխանութեան փառաւորութիւնն, մտաց փառամոլութիւնն և այլ ամբարտաւան ու բարբարոս փառաւորութիւններ ընդարմացուցած են զիս և թալկացուցած։ Սիրտս ծարաւի է իրական և ճշմարիտ հիւթոյ. եւ այս ճշմարիտ հիւթն ու իրականութիւնն քո սրտիդ մէջ կը տեսնեմ, ո՛վ աղքատ կին. քանզի կը տեսնեմ, որ մարդիկ ձգած են, բայց Աստուած այցելութիւն եկած է քեզ։ Բայց աւելի քո մօտ կը տեսնեմ իմ պապակս զովացնող ջուրն յաւիտենական, ո՛վ Փրկիչդ իմ Յիսուս. քո մօտ, որոյ տեսին անարդ է և նուազեալ քան զամենայն որդւոյ մարդկան, և որ ինքնին ասացեր. «Որդն եմ ես և ոչ մարդ», և սակայն դու ինքն ես Տէր 'ի փառս Աստուծոյ Հօր։

Այո՛, այո՛, միայն Յիսուսի Քրիստոսի մէջ է, որ մարմին ուռնայեցած է և հոգին սիրապետած. ամենայն մեծութիւն բացակայ է և միայն կ'երեւի ճշմարիտ մեծութիւն, հոգւոյ մեծութիւն։ Արտաքուստ բան մի չը կայ նորա վերայ, որ փափաքիմք տեսնել. չը կայ գեղեցկութիւն, և տեսիլ նորա անարդ է քան զամենայն որդւոյ մարդկան. չը կայ շքեղութիւն, չը կայ փառաւորութիւն. բայց կայ մեծութիւն, կայ գեղեցկութիւն, զոր փոխանակ պէնէլը— պէտք է ղգալ։ Փակեցէք ձեր մարմնոյ աչքերն, բացէք հոգւոյ աչքերն և ասացէք Պաւղոսի հետ. «Ո՜հ, ինչքան փառաւոր ես Յիսուս, ինչքան շքեղ և սքանչելի է քո գալուստդ սրտի աչքերու համար, որք կը տեսնեն զիմաստութիւն»։ Ահա սիրտն է ճշմարիտ տաճար ճշմարտին Աստուծոյ։ Մարմարոնեայ տաճարն, ոսկեզօծ և փոլփոլուն տաճարն, ձեր աչքերն կը գրաւեն եւ կը հեռացնեն կենդանի տաճարէն, ուր կը բնակի լուսն Աստուածութեան։ Կարող էք դուք ուրիշ բանի նայիլ, քանի որ Մարդասիրութիւնն սրտի տաճարի մէջն է։ Մարդասիրութիւնն է փառք հոգւոյն, փառք մտաց. նա է միանգամայն փառք Աստուծոյ. և այն մարդն, որոյ մէջ կը բնակի գերագոյն մարդասիրութիւնն, այն մարդն կը ներկայացնէ նաեւ գերագոյն մեծութիւնն ու գեղեցկութիւն։ Ահա այս մեծութեանն պէտք է նայիլ. ահա այս գեղեցկութեան պէտք է նայիլ յաւիտեան։

Այդ՝ կը հաւատամ ես, որ լաւ համոզուեցաք թէ այն մարդիկն, որոնք Յիսուսի Քրիստոսի աչքով նայած են կենդանի և մարմնացեալ մարդա-

digitised by A.R.A.R.@

սիրութեան վերայ, նոքա բնաւ երբէք կամեցած չեն ուրիշ բանի նայիլ։ Դուք եւս կը վկայէք, որ զՅիսուս Քրիստոս տեսնողներն և ճաշակողներն միշտ ցաւակցութեամբ նայած են այն մարդոց վերայ, որոնք չեն նայիր Յիսուս Քրիստոսին, այլ կընայիր նիւթոյ, կընայիր արտաքին շքեղութեան և խորասուզուած են մոռայ ամբարտաւանութեան մէջ։ Յաւիտենականութեան նկատմամբ դաշտի ծաղիկն տեւողութեամբ եւ մեծութեամբ հաւասար է ամեն բարձրաշէն և հոյակապ յիշատակարաններուն, իմացականութեան ամեն վսեմ խորհուրդներուն և ծնունդներուն. վասն զի տիեզերական ալեկոծութեան մէջ ամենայն ինչ պիտի կորընչի, ինչ որ միացած չէ Աստուծոյ հետ, և Աստուած միայն է 'ի վեր քան զամենայն ալեկոծութիւն։ Ամեն բան պիտի կորնչի, և նոյն իսկ ձեր մոռածութիւններն ու խորհուրդներն անգամ, եթէ միացած չեն Աստուծոյ հետ։

Ո՞վ Բուրդեր, կամ մոռայ դրութիւններ և սիստեմներ. ո՞վ ալեւոր լեռներ. ո՞վ քան զամենայն լերինս բարձրագոյն երաշներ եւ ցնորքներ, դուք պիտի կորնչիք համանդամայն։ Վասն զի Աստուած միայն է անմահ և իւր անմահութիւնն նոցա միայն կը հաղորդէ, որոնք համանման են իրեն, որոնք միացած են իրեն հետ։ Հնազանդութիւն՝ խոնարհութեամբ, հնազանդութիւն՝ սիրով, ահա այս է, որ չը կորնչիր յաւիտեան։ Բնութիւնն իւր տուած պարգեւներն յետ կ'առնու, միայն շնորհաց պարգեւներն են, որ անմահ են եւ յաւիտենական։ Ամեն արտաքին գեղեցկութիւն կը լուծուի, կ'անհետի. սրտի գեղեցկութիւնն է միայն, որ չը թառամիր, այլ միշտ կը ծաղկի և կը փթթի։

Այսպէս և այս իմաստով ահա Յիսուս Քրիստոս քարոզեց կեանք և անմահութիւն. այս իմաստով Քրիստոնէութեան մեծութիւնն տուաւ ամեն բանի իւր ճշմարիտ արժէքն, թէ՛ երեւելեաց և թէ՛ աներեւութիւց։ Քրիստոնէութեան սոյն յատկութիւնն այնչափ ակներեւ է և յայտնի, որ անհնար է ուրիշ կերպիւ հասկնալ և ըմբռնել Քրիստոնէութիւնն, եթէ ոչ իբրեւ թագաւորութիւն հոգւոյ, եւ իբրեւ յաղթութիւն անտեսանելոյն և աներեւութին։ Բայց գիտէք, որ Քրիստոնէութիւնն ձեւ կամ մարմին առաւ աշխարհիս մէջ. նա տեսանելի եղաւ։ Աշխարհներէ անցաւ, դարերէ անցաւ, Երկրիս վերայ ոմանք պաշտպանեց և այն բաներու մէջ տեղ գըրաւեց, որոց վերայ աշխարհն կը նայի և կը տեսնէ։ Այս տարածութեան և տեւականութեան մեծութենէն զատ Քրիստոնէութիւնն ունի հոգեւոր եւ իմացական մեծութիւն։ Նա մեծ է իւր ծնած եւ ներշնչած գաղափարներով, մեծ է իւր քարոզած իմաստութեամբ, որով և դրաւած է ամեն վսեմամտիչ մտածողներու զարմացումն։ Այսպէս ուրեմն, Քրիստոնէութիւնն մեծ է նոյն իսկ ըստ եղանակի մտածութեան աշխարհի։ Բայց պէտք է զգուշանանք այս եղանակաւ Քրիստոնէութեան վերայ զարմանալու։ Պէտք է զգուշանանք, որ Քրիստոնէութեան ճշմարիտ մեծութիւնն մեր տեսութենէն չը խուսափի։ Զը թողունք, որ մեր նայուածքն խոտորի ու մոլորի և չը պարտաւորենք զՅիսուս, որ զմեզ յանդիմանէ. «Այդ բանին կը նայիք. այդ է, որ կը զարմացնէ զձեզ։ Ի՞նչքան թշուառ պիտի լինէինք մենք, եթէ այն նպատակաւ միայն մտնէինք աներեւոյթ թագաւորութեան մէջ, որպէս զի աւելի սերտ և ապահով կապով

digitised by A.R.A.R.@

կատարէինք տեսանելի աշխարհի հետ, և նոյն իսկ հոգւոյ թագաւորութեան մէջ ուրիշ բան չը գտնէինք, այլ միայն զաշխարհ, իւր ամէն յօժարութեամբ և ցանկութեամբ։ Ի՞նչքան թշուառ ոգիով լինէինք մենք, եթէ Եբրայեցի Ժողովրդին նման մեր բոլոր յոյսն դընէինք այս ուռնայն և դատարկ խօսքերուն վերայ. “Տաճար Տեառն, տաճար Տեառն, տաճար Տեառն”. Երէմ. Է. 4. եւ ամենեւին չ՚ուզղէինք մեր ճանապարհն ու գնայցքն։ Եթէ մի միայն Քրիստոնէութեան նիւթական և մտաւորական կրկնակի մեծութեանն նայինք, այս կը նշանակէ իսկապէս մեր աչքերն քարերուն սեւեռել, ինչպէս սեւեռեցին տաճարի քարերուն վերայ Ցիսուսի աշակերտներն։ Ընդարձակ մտածութիւններն, դարաւոր աւանդութիւններն, փառաւոր յիշատակներն, առանց Քրիստոնէութեան ճշմարիտ ոգւոյ, անշունչ քարեր են, ցուրտ նիւթեր, կարծր նիւթեր, անկենդան նիւթեր։ Բայց կան ուրիշ քարեր, կան կենդանի քարեր, որք իրարու հետ միանալով կը կազմեն հոգեւոր շինուածն և սուրբ քահանայութիւնն. “Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր՝ յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւորն պատարագս՝ հաճոյս Աստուծոյ ի ձեռն Ցիսուսի Քրիստոսի”։ Ա. Պետ. Բ. 5։ Անշուշտ՝ սոյն կենդանի քարերէն էր այն այրի կինը, որոյ առատաձեռն ողորմութիւնն նշմարեց Ցիսուս Քրիստոս։ Սոյն քարերէն են ամէն անկեղծ և խոնարհ հոգիներ, որ ապաշխարութեամբ նոր կեանք ստացած են, կեանք ծածկեալ ընդ Քրիստոսի յԱստուած։ Այս կենդանի քարերէն են այն հոգիներն, որոնք Թերեւս Աստուծոյն տալու համար ուրիշ բան չունենալով իրենց անձն տուած են սիրով և հաճութեամբ։ Ահա այս գեղեցիկ քարերուն, այս շքեղ մարմարիոններուն պէտք է որ նայինք։ Որոնենք ուրեմն սոյն քարերն. որոնենք այս աղմկալից աշխարհի մէջ. որոնենք աստուածպաշտութեան արտաքին փառաշուք ձեւերու տակ. որոնենք հոյակապ տաճարներու մէջ խոնուած բազմութեան արտերու մէջ. որոնենք և գտնենք այս գաղտնի մեծութիւնն, այս գաղտնի աշխարհն, այս ստորերկրեայ բնակարանն, այս խոնարհութեան գեանափորներն, ուր Ի լռութեան կը կատարուի հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւնն և ուր կը փառաւորուի անարատ եւ սուրբ կրօնն։ Այս որոնման մէջ կ՚ապասէ ահա մեզ հոգեւոր տեսարան, որոյ գեղեցկութիւնն կը յափշտակէ մեր սիրան։ Խոնարհութիւն, ներողութիւն, ողորմութիւն, ապաշխարութիւն, աղօթք, վստահութիւն առ Աստուած, քաջ և ծարաւ արդարութեան, նախանձաւորութիւն վասն աստուածային փառաց, ոչքա են ահա ճշմարիտ տաճարի, ճշմարիտ սրբաւայրի գեղեցկութիւնն ու շքեղութիւնն։ Աւելի կը փայլի և կը շողշողայ սոյն շքեղութիւնն, երբ ներկայացուցիչն մի աղքատ է, մի գերի, մի տգէտ, մի մանուկ կամ մի չարագործ, որ դղջալով Աստուծոյ ողորմածութեան գիրկը գիմած է։ Ա՜խ, որչափ հեւի է տակաւին մեր սրտէն ճշմարիտ մեծութեան սէրն. քանի՛ քանի՛ անգամ աղքատութիւնն, տրտմութիւնն կը ծածկեն մեր աչքէն սոյն ճշմարիտ գեղեցկութիւնն և կը սարսուցանեն զմեզ։ Ի՜նչպէս կը յօժարինք մենք մնալ այն տեղ, ուր է աղաղակ և ամբարտաւանութիւն աշխարհի։ Ի՜նչքան մարմնաւոր ենք մենք տակաւին և ի՜նչքան անպատրաստ ենք Աստուծոյ թագաւո-

digitised by A.R.A.R.@

բութեան համար, որ է թագաւորութիւն հոգեւոր։ Դեռ պրչակի փոփոխութիւնը կարողութիւն [ունինք. պրչակի մեծնալու եւ նաեւ վերացնելու։ Մեր զօրութենէն] վեր զօրութիւն, մեր մարդկային կարողութենէն վեր մի կարողութիւն միայն կարող է բարձրացնել [զմեզ մինչեւ այն տեսութեան կէտն], ուստի ամենայն ինչ իւր դրութեամբ կ'երեւի, փոքրը՝ փոքր եւ մեծն՝ մեծ։ Խնդրենք ուրեմն այն վերին Կարողութենէն, որ կը անօրինէ ամենայն ինչ, որ կը անօրինէ ներկայն եւ ապագայն, որ Տէրն է յաւիտենականութեան. իսկ դրենք որ ինչպէս ուրիշներուն տուած է, մեզ ևս տայ սրտի աչքեր, որ կարողանանք Իմաստութիւնն առնել։

ՎԱՍՆ ԹԱԼԵՀԻ ԵՒ ՊՈՒՃԻ

Ի ՖՐԻԿ ԵՐԳԷ։

Ամրոցն որ Թալեհն ու Պուռճն՝ 'ի Ֆարսքն չէ ըղորդած.
Թէ շատ և քիչ ջանայ՝ թէ ըղորդի, նա այլ իսկ է ծրուած.
Բանին ըղորդն ու ծուռն՝ գէշն ու աղէկն, 'ի Զարքն է կապած.
Եւ յօր ծննդեան մարդոյն, ոնց մօրէն է ինք բաժանած.
Զատվլաթն՝ երբ կուտայ Աստուած, նա կուգայ ամենն աջողած.
Բայց զայն իմանալ պիտի, թէ Թալեհն յոյր Պուռճ է անկած.
Թէ [Պուռճրն ու Թալեհն աղէկ։] Աստուծոյ է քեզ հրամայած,
Զինչ յաշխարհս [մարդ որ կայ, ղերթ մշակ առաջդ են կանգնած։
Այն մարդն որ] Թալեհ չունի, յամենայն տեղիք նա ծեծած.
Ջանայ թէ մէկիկ [խօսի, քան զսկուոլ աղէկ նա գրած.
Կանչեն թէ քանի՞ ասես, քո ամեն բաներդ է հոտած.
Զօրն դու 'ի հաջ կենաս, Աստուծոյ հատած ու անիծած։
Այն մարդն որ Թալեհ ունի, յուսեքէ իսկի չէ ծեծած.
Զօրն կայ պարտպ նստած, շատ բարիք 'ի մօտն է կուտած.
Զինչ որ կու խօսի, աղուոր մարդարտով բաներն է շարած.
Թագաւոր և դատաւորի մօտ և ամենայն տեղիք մեծարած.
Թէ ճարտարութեամբ ուտէր մարդ զհացն զինչ իւր էր հրամայած.
Անգէտն տառապեալն յաշխարհիս վերայ չ'պիտէր մէկիկ ապրած.
Ի սերմանելոյ ժամն կու լինի այս ցեղ հանդիպած.
Մէկըն թագաւոր լինի, մէկըն աղքատ՝ և մէկըն ցաւած,
Մէկին ծերութիւն հասնի, ու ամեն բաներն յաջողած.
Մէկին դերութիւն հասնի, կամ կտրիճ օրօք նա մեռած.

digitised by A.R.A.R.@

Կամ ինքն 'ի մորէն ծնած , աչք չի կայ . կամ կոճղ է անկած .
Զայս ո՞նց կարենանք գիտել թէ՝ այս յէ՞ր է հանց (1) բաժանած ։
Մտօքս յայս բանիս վերայ , շատ ատեն 'ի հոգս եմ անկած .
Կասեմ թէ՝ էր այս եղեր , որ ամենն հաւասար չէ ղուգած .
Ամենն փոլաքին արարքն , մէկին հաշտ՝ մէկին խռոված .
Ի մէկէն սիրով հայի , մէկալին դէմն խոլոռած ,
Շատ հասարթ (2) ունիմ 'ի սիրտս , բայց այսով եմ խիստ շուարած .
Աւա՜ղ թէ մեռնիմ պարտօք , և չը լինի պարտքս վճարած .
Աստուած , մի՛ առներ 'ի յիմ շատ մեղացս , որ յիմմէ գործած .
Մինչ որ վճարի պարտքերս , որ 'ի յիմ շալակս է հանած .
Յայնժամ թո՛ղ ելնու հոգիս , մահն մեզ համար է հրամայած .
Մարմինս 'ի հողին հանգչի , յօրէս այս մինչ 'ի կատարած .
Մարդոյն որ իւր հայն ու բախտն ու ոճիին՝ 'ի վերն է գրած .
Զօրն՝ թէ գատած կենայ՝ թէ պարապ , նա ինքն է հասած .
Ո՛չ խիստ արտորալ պիտի , և ո՛չ անհոգ 'ի վայր նստած .
Բայց պարտ է արթուն կենալ , վերուստ է ամեն պատրաստած .
Օրհնեալ Արարիչն Աստուած , յամենայն լեզուէ նա գոված .
Հանապազ 'ի նա դիմենք , որ թողու զմեր մեղքն 'ի բաց .
Անճառ և անքննին Աստուած , որ դու յոյս ես մեղաւորաց .
Մեղապարտ Սեբաստացւոյս (3) , լէր յաւուրն յետնում՝ ողորմած .
Թէպէտ յանցանաւոր եմ ես , դու շնորհես ձիր պարգեւաց .
Արժանացո՛ ընդ նոսին , որք յաջակողմեանդ են դասած ։

(1) Այսպէս . — (2) Կարօտ . փափաք . — (3) Այն ռամկական ոտանաւորն , որ օրինակուած է Ս . Աթոռոյս Թանգարանի գրչագիրներին , քանի մի ձեռագրաց մէջ կը գտնուի , և ամենց մէջ վերջին չորս տողերն կը պակսին , ուր Սեբաստացի անունն յիշուած է , որ թերեւս օրինակողի անուն եւ յաւելուած լինի , քան թէ հեղինակի . իսկ ՅՐԻԿ անունն , յայտնի է թէ բանաստեղծական անուն է , եւ հաւանական կը կարծուի , որ կամ Յով . Պուզ վարդապետին է և կամ Խաչատուր Դեչառեցւոյն ։

digitised by A.R.A.R.@

ԼԷՅՊՑԻԻՆ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Վանաձաղականութեան ու գիստութեանց նկատմամբ :

Լէյպցիկը Եւրոպիոյ նշանաւոր քաղաքներից մէկն է : Նա ընկած է մի լայնատարած ու բերրի դաշտավայրի վրայ, զոր առոգանում են երեք օձապտոյտ առատահոս գետակներ իրենց բազուկներովը, որ և մի քանի մեղն հեռաւորութեամբ շատ կենդանացած է երեւում, տեսնելով թէ ինչպէս փոխ առ փոխ միմեանց յաջորդում են դաշտեր, մարգեր, անտառներ և նա մանաւանդ բազմաթիւ շէն գիւղօրայք : Այդ գետակների խառնման տեղը Հենրիկոս Ա. Թագաւորը շինեց մի փոքրիկ դղեակ պահապանաց համար, որի չորս կողմ ապահովութիւն որոնող գիւղականաց համար բնակութեան տեղի դարձաւ և շուտով ձեւակերպուեցաւ մի գիւղ, որը այդ անունով երեւում է առաջին անգամ 1015 թուականին։ Լէյպցիկ անունս գերմաներէն չէ, այլ ծագում է սլաւոնական բառից eipa, որ է թմբի կամ կակղի. ուստի հաւանական է որ քաղաքիս նախնի բնակիչները սլաւոններ եղած պիտի լինին, բայց փոքր առ փոքր խառնուելով գերմանական ցեղերի հետ, աննկատելի կերպիւ անհետացել են բոլորովին : Եթէ մեր ուշքը դարձնենք այն քաղաքական անցքերի վերայ, որոնք անցել են այստեղ, այն ժամանակը պիտի խոստովանինք որ Լէյպցիկը Եւրոպիոյ քաղաքական կեանքի մէջ նշանաւոր դեր է խաղացած : Յեղափոխութեան կեդրոններից մէկն էլ Լէյպցիկն էր և չը նայելով որ շատ քաղաքացիք զոհ դնացին Գէորգ մծրուսաւոր Դուքսի սրին, շատերը տանջանքի ենթարկուեցան և կամ աքսորուեցան, սակայն Լիւտերի վարդապետութիւնը այստեղ իրեն ջերմ պաշտպաններ գտաւ և այստեղից տարածուեցաւ բոլոր Սաքսոնիա : Երեսնամեայ և եօթնամեայ պատերազմների քաղաքացւոց հասուցած աղէտներն ու տառապանքները քիչ չեն, բայց Լէյպցիկի կենաց սարսափելի ու դառնագին օրերը Նապոլէօն Ա. արշաւանքն էր, որ ոչ միայն քաղաքացւոց անտանելի ծախքերի մէջ ձգեց, այլ նաև քաղաքի մի նշանաւոր մասը աւերակ դարձրուց : Թիզ ներուի մեջ մի այդպիսի նշանաւոր անցքի վերայ փոքր ինչ երկարօրէն խօսիլ :

Նապոլէօնը յետ դառնալով Ռուսիայից 1813 թ. Յուլիս ամսում և իրեն դաշնակից ունենալով Սաքսոնիան, ամրացաւ Լէյպցիկի մէջ 180,000 զօրքով : Դորա եաւելից եկան Ռուսներն ու իրենց դաշնակից տերութեանց զօրքերը, որոց թիւը հասնում էր մինչի 300,000 : Հոկտեմբերի 16-ին սկսուեցան քաղաքիս շրջակայքում պատերազմի կործանիչ գործողութիւնքը, որոց վրայ մինչի այսօր շատ ականատեսներից կարող էք սարսափելի տեղեկութիւններ ստանալ : Պատերազմի ժամանակ Նապոլէօնն էր իւր զօրքի հրամանատարը, սակայն նորա ջանքն ու ճարտարութիւնը 'ի դերեւ ելան և նա ստիպուած էր Հոկտ. 18 թողնել պատերազմի դաշտը եւ ամրանալ քաղաքի մէջ. իսկ հետեւեալ օրը փախուստ տալով նոյն քաղաքից դէպ 'ի Գաղղիա կամեցաւ ազատել Եւրոպան իւր մարդախանձ աշխարհակալութիւնից : Այս անցքը ահա առիթ եղաւ քաղաքի մի քանի արժանայիշատակ արձանագրութեանց : Դիմելով դէպ 'ի քաղաքիս արեւելեան կողմը, ձեր աչքի առաջ հան-

digitised by A.R.A.R.@

գիտնում է մի ընդարձակ դաշտավայր, որի մէջ տեղը բարձրանում է մի շղթայակապ սիւներով, ծալիկներով ու ծառերով զարդարած՝ բլրակ։ Այդ բլրակի վերայ կանգնած է մի հատուամարմին արձան, որի գլխին կը գտնէք աշխարհակալի փեղջրը, գիտակն ու սուրը, և որի արեւելեան երեսին ոսկետառ քանդակած է. «Այս տեղէր կանգնած Նապոլէօն 1813 թ. Հոկտ. 18 և գիտում աղգաց պատերազմն». իսկ հակադիր երեսին կարդում էք դուք «Տէրն է ճշմարիտ զինուորը, Տէր է անուն նորա». Յառաջ գնալով դէպի մերձակայ Մոյդօրֆ գիւղը դուք անընդհատ հանդիպում էք աստ և անդ փոքրիկ սիւնակների, որոնք կամ արձանագրուած ունին իրանց վրայ այդտեղ կանգնած զօրավարի անունն ու նրա զօրաց քանակութիւնը և կամ մի նշանաւոր անձնի անկման տեղն են ցուցանում։ Հասնում էք Մոյդօրֆ գիւղը և այստեղ՝ մի անուանատպատ ձորակի բերնում՝ դարձեալ գտնում էք դուք Նապոլէոնին պէս մի շքեղ արձանագիր, որ կըրում է իւր վերայ դաշնակից տէրութեանց զօրաց սպարապետի անունը— Շվարցենբերգ։ Այդ արձանի տակ՝ ձորակի միջին՝ գտնվում է մի փոքրիկ ձեռակերտ անձաւիկ, որի վանդակապատ լուսամուտից տեսնում էք դուք պատերի վրայ կախած մի մարդու ոսկորտիք, տարձակներ ու սրեր. իսկ յատակի վերայ ընկած են թնդանօթների գնդակներ։ Այս յիշատակարանները՝ ի յուշ ածելով ինձ արիւնախանձ Նապոլէօնի անունն ու աշխարհասասան գործերը. ինչքը չը զարթեցրին իմ սրտիս մէջ... Այո՛, Տէրն է մի միայնակ ճշմարիտ զինուորը, Տէր է անուն նորա։ Երանի՛ նրան, ով որ հաւատում է եւ յոյս ունի։

Գալով վաճառականական նշանակութեան, պիտի ասենք, որ Համբուրգից յետոյ Լէյպցիկը իւր տօնավաճառներով Գերմանիոյ առաջին վաճառաշահ քաղաքն և քաղաքակրթեալ աշխարհի նշանաւորագոյն կենդրոններից մէկն է։ Վաճառականութիւնը՝ բացի գիտական ու պաշտօնական անձանց՝ քաղաքի բոլոր բնակչաց կենսական զբաղումն է դարձած։ Արդէն ԺԲ. դարումը Լէյպցիկ արտօնաւորած վաճառանոցներ ունէր, որ և ԺԵ. դարումը ընդունեցան տօնավաճառների բնաւորութիւն։ Փրիդրիկոս Հեղ մանկանուանելոյն ու Մաքսիմիլեան Ա. շնորհաբաշխութեամբք Լէյպցիկը ապրանքների յառաջացաւ և այն քաղաքները, որք՝ ի սկզբան մրցանակից էին նորան, այժմ անկարող էին կանգնել Լէյպցիկի տուրեւառի դէմ։ Սակայն երեսնամեայ և ապա եօթնամեայ պատերազմները, Նապոլէօնի արշաւանքն ու նորա կործանիչ «Ցամաքային» (Continental) կոչուած սիստեմը, որով Անգլիացւոց վաճառականական նաւերին արգելվում էր Գաղղիայի և կամ նորա դաշնակից տէրութեանց նաւահանգիստը մտնելու, արգելական „prohibitif — և «պաշտպանիչ» — protecteur կոչուած սիստեմները, որոնցից առաջինը արգելում էր այն ապրանքների մուտքը, որք կարող էին մրցել տեղական ձեռագործութեան հետ, իսկ երկրորդը թոյլ էր տալիս այն ապրանքների մուտքը, որք չէին կարող մի նմանօրինակ մրցութիւն յարուցանել ներքին վաճառատեղեաց մէջ, եւ որոնց հետեւելով սկսեցին բարձր մաքս նշանակել ներս մտնող ձեռագործ՝ և դուրս տանուող հում ապրանքների վրայ. այս բոլորը վաճառականութիւնը հասցրին իրեն ճգնաժամին և ասիման առ ասիման բարձրանում և

digitised by A.R.A.R.@

լուրջ էր լինում վաճառատեղաց բազմությունը։ Այդ ընդհանուր տագնապի ժամանակ Էյլենբուրգին վիճակուած էր մեծամեծ ազդեցութիւն կրելու և շատ ուշադիր կը կանգնէր՝ եթէ Սաքսոնիան և նրա փոխէր իւր սկզբունքը և ստորագրելով դաշնակից չը լինէր 1828 թուին ընդհանուր Գերմանիայի մաքսային օրէնքներին, որով հաստատուեցաւ առաւել ազատ վաճառականութիւն, որով և Էյլենբուրգի առուտուրն ու տօնավաճառները սկսան յառաջանից առաւել կենդանութիւն ստանալ և անհամեմատ արագութեամբ յառաջ ընթանալ։ Քաղաքի հարուստ վաճառականութիւնը պատճառ եղաւ 1835 թուին Էյլենբուրգ—Դրեզդենեան երկաթուղայ շինութեանը, որ և Գերմանիայ մեծամեծ երկաթուղիների շարժառիթը դարձաւ։ Բացի այդ վերոյիշեալ գծից, շուտով մէկը միւսին հետևեցան և այլ չորս գծեր, այնպէս որ Էյլենբուրգը այժմ Գերմանական երկաթուղիների մի ծանրակշիռ կեդրոնն է ներկայացնում։ Էյլենբուրգի վաճառաշահութեան գլխաւոր առարկաները են բացի երկրի բերքերից ու քաղաքային ձեռագործութեան արդիւնքներից, նաև Անգլիական, Բելգիական ու Զուրիցերական մանուածք տարեկան 10 միլիոն ռուբլուց առաւել), նոյնպէս և տեղական թոկի ու մագի մանած, հում աներկի մեռաքս (2 միլիոն ռուբ), բամբակի ու բրդեայ ապրանքներ, մանդ, կիսամեռաքս, դիպակներ, վերեայ գործուածներ, բաճատ և այլն (՝ի միասին տարեկան — 10 միլիոն ռ.). վերջին ժամանակները կօլոնիական ապրանքները շատ մեծ գործածութեան մէջ մտան այս տեղ (6 միլիոնից առաւել)։ Հում ապրանքների համար Էյլենբուրգը այժմ աշխարհիս գլխաւոր վաճառականոցներից մէկն է, սա ընդունում է օրինակ համար տարեկան 6—7 միլիոն թալերի միմիայն մաղեղէն, որ համայն երկրագնդիս արտադրութեան մի երրորդ մասն է, այդ հաշուում Ռուսաստանից ու Ասիայից Էյլենբուրգը ստանում է 1,400,000 թալերի մաղեղէն։ Պիտի ասենք, որ քաղաքիս երեք տօնավաճառները (այն է յունվարին, ապրիլին ու սեպտեմբերին) պատճառ են եղած տեղւոյս ապրանքի մուտքը արագընթաց բարձրանալուն. օրինակ՝ 1837-թուականին բոլոր ներս մտած ձեռագործ ապրանքի քաշն էր 28,000 ցենտներ, իսկ 22 տարուայ ընթացքում՝ այն է 59 թուականին այդ քաշը հասնում է մինչի 80,000 ցենտների. հում ապրանքի մուտքը 5,000-ից բարձրանում է 10,000, իսկ կօլոնիական ապրանքներինը 24,000-ից —146,000 ցենտներ։ Տօնավաճառների ժամանակ այստեղ վաճառվում են բացի հում և վերոյիշեալ ձեռագործ ապրանքներից նաև կաշուեղէն, ձիու և խոզի մազ, բամբակեղէն, մահուդեղէն և այլն։ Տօնավաճառների ժամանակ լինում են այստեղ և Հայերը, որք կամ մաղեղէն են բերում ծախելու և կամ մահուդեղէն են գնում Պարսկաստան տանելու։ Թէ ինչ աստիճանի ծաղկած դրութեան մէջ է Էյլենբուրգի առուտուրը, բաւական ենք համարում ասել, որ միայն նամակատան միջոցաւ ստացած դրամական ծրարների թիւը միջին թուով տարեկան հասնում է մինչի 500,000 որոնց արժէքը —95 միլիոն թալեր։ Սակայն պիտի նկատենք այստեղ, որ Փրանգ—Պրուսական պատերազմից յետոյ առհասարակ Գերմանիայի առուտուրն ընկած դրութեան մէջ է։ Այս վերջին տօնավաճառի ժամանակ ոչ մի Էյլենբուրգցու բերանից մի ուրախալի խօսք չէիք լսիլ—բոլորբերանք գանգատում էին

digitised by A.R.A.R.@

գործերի վար դրութեան վերայ։

Լէյպցիկի վաճառականութեան մի էական մասն է գրավաճառութիւնը։ Երբ ԺԶ դարումը Ֆրանկֆուրտից տպագրութիւնը տեղափոխուեցաւ այս տեղ, Լէյպցիկ դարձաւ ինչպէս Գերմանական աղգային, նոյնպէս և օտար աղգաց մատենագրութեանց, գեղարուեստական ու երաժշտական ձայնագրութեանց վաճառականութեան կեդրոնը։ Թէ ինչ արագութեամբ է յառաջանում այս տեղ վաճառականութիւնը, բաւական ենք համարում ասել որ 1853 թ. տեղւոյս գրավաճառների թիւը հասնում էր մինչև 150 ի, իսկ այժմ նոցա թիւը 200-ից առաւել է, որոնցից համարեա 80 բացառապէս գրքեր են ընդունում իրենց հաշուով տպագրելու։ Դոցանից 25 ը ունի սեպհական տպագրատներ հարուստ ու նորագոյն սիստեմի մամուլներով, որոնք յայտնի են իրենց լայնածաւալ գործակատարութեամբ ոչ միայն Գերմանիայում, այլ և բոլոր Եւրոպայում։ Ա յստեղ հրատարակվում են թուով 172 լրագիր ու շաբաթաթերթ։ Ահա այդպիսի հարուստ գրավաճառութիւնն էր պատճառ, որ Լէյպցիկ ձգեց առ ինքը ոչ միայն բաղմաթիւ հեղինակներ ու գիտնականներ, այլ և գեղարուեստներին ու երաժշտական երկասիրութեանց մի օտարոտի կենդանութիւն բաշխեց։

Մաւոր զարգացման նպաստող հիմնարկութեանց մէջ նշանաւորագունից մէկն է քաղաքային մատենադարանը, որ իւր ընդարձակ դահլիճների մէջ պարունակում է մինչև 110,000 մատեան և 2,000 ձեռագիր։ Բայի դորանից այստեղ գտնվում են մինչև 30 ընթերցարաններ, որոնք ինչին վճարով հայթհայթում են ընթերցասէր ժողովրդեան ամենայն կերպիւ ընթերցասիրելի գրեանք. 1865 թուականին մի ընկերութիւն բացաւ այստեղ մի ընթերցարան, ուր ստացվում են հռչակաւոր գերմանական, գաղղիական ու անգղիական լրագրեր և ինչին վճարով տալիս են կարդալու։ Ընթերցասիրողը ստանում է 4 կամ 5 թաղերով մինչև 10 հատ լրագիր. իսկ ընկերութիւնը ունենալով բազմաթիւ բաժանորդներ — համարեա Լէյպցիկի բոլոր ընտանիքները — մեծ գումար է վաստակում։

Մտաւոր զարգացման ասպարիզում իբր նշանաւոր դեր խաղացող՝ են նաև քաղաքիս երկու գիմնազիաները, օրիորդաց, իրական (Realschule), վաճառականութեան դպրոցները, երկու զինուորական և եօթը ժողովրդական ուսումնարանները, գրագրաղմների, կոյրերի ու համրուխուլերի վարժոցները։ Թողնելով դոքա մի ուրիշ գիպող ժամանակի, դառնանք այժմ համալսարանին։

Գիտնական հիմնարկութեանց մէջ առաջին տեղն է բռնում համալսարանը, որի հիմնարկութեանը պատճառ եղաւ 1409 թուականին Բոհեմացւոց ու Գերմանացւոց մէջ ծագած խռովութիւնը, որոց հետեւանքը եղաւ այն, որ գերմանացի ուսանողները մեծ թուով գաղթեցին Լէյպցիկ։ Սկզբում համալսարանին հետ միացրած էին մեծ ու փոքր արքունի և օրիորդաց ուսումնարանները, որոնց մէջ դասախօսութիւն անող քսան մատենագրերի ռոճիկները հայթհայթելու համար համալսարանին ընծայուեցան տէրութիւնից 3 գիւղ, իսկ Պապ Յովհաննէս իդ-ից — վեց կանոնիկոսութիւն։ Սակայն պիտի ասենք, որ Կայսրընտիր Մօրիցը համարեա համալսարանի 2րդ հիմնադիրը եղաւ, նուիրելով նորան Ս. Պաւլինեան վանքն ու ստացուածքը,

digitised by A.R.A.R.@

ուր այժմ եւ գեռեղուած է համալսարանը, հինգ գիւղ և մի քանի ուրիշ վանուց եկամուտներ։ 1866 թուականին այստեղ աղ բատուսանողաց համար շինուեցաւ ընդհանուր սեղանատուն և նշանակուեցան բազմաթիւ թոշակներ (stipendium)։ Սաքսոնիայի երկու վերջին թագաւորների՝ Ֆրիդրիկոսի ու Յովհաննէսի՝ ժամանակ, համալսարանների միջոցները առաւել շատացնելու ու եկամուտները աճեցնելու նպատակաւ հոյակապ համալսարանական տներ շինուեցան, որք և մեծ արդիւնքի աղբիւր են դարձած այժմ։ Սակայն քաղաքի մէջ համալսարանը ունի քառասուն և մէկ հարուստ արդիւնաբեր և հոյակապ տներ, յորոց շատ նշանաւոր են աստեղագիտանոցը, բնագիտական, բնաբուծական, ախտաբանական (pathologie) գործանոցները (laboratoire) և հիւանդանոցները։ Համալսարանին են պատկանում նաև բացի մի ընդարձակ գրադարանից ուր գտնվում են 200,000 ընտիր մատեանք և 2,500 ձեռագիրք, նաև դրամական, հնախօսական, հանրախօսական, կենդանաբանական և այլք՝ մինչի 20 թանգարաններ ու ժողովածուներ։ Համալսարանի տարեկան ծախսը հասնում է 170,000 թալերի։ Իւր երկարժամանակեայ գոյութեան ընթացքում Լէյպցիկի համալսարանը ստացել է Գերմանիայից բարձրագոյն ուսումնարանների ամենահռչակաւորի փառքը եւ իւր ուսուցիչների մէջ համարում է շատ ականաւոր անուններ։ Ուսանողների թիւը մեր դարու սկզբներումը հասնում էր մինչի 1,300, բայց յետոյ կառավարութեան ու վարչութեան շնորհիւ անկաւ մինչի ութ հարիւրի և միայն Յովհաննէս թագաւորի խոհեմ խնամարկութեամբ կրկին բարձրացաւ և 66 թուականին համալսարանը կրկին հաշվում էր 1179 ուսանող։ Իսկ այժմ ուսանողաց թիւը մի զարմանալի արագութեամբ աճելով հասել է մինչի 2865, որոնցից միայն 90-ն են աղատ լսողներ, այնպէս որ այժմ Լէյպցիկի համալսարանը Գերմանիայ մէջ ուսանողաց քանակութեան նկատմամբ՝ առաջինն է։ Այս իրողութիւնը պարտական է համալսարանի ահագին հարստութեան, որ միջոց է տալիս պահել իւր ամբիոնների վերայ մեծահռչակ պրոֆեսսորներ, որոնց անուան վերայ և ժողովում են յամենուստեք՝ երկրագնդի ամեն ծայրերից, բազմաթիւ ուսանողներ։ Սաքսոնացի ուսանողներ շատ քիչ կան — 981. իսկ մնացեալ 1884-օտարներ են, այդ թուում 5-ը Ասիայից են, 2 Ամերիկայից, 48 Ամերիկայից, 1 Աւստրալիայից եւ 5 Ռուսահպատակ Հայեր։ Աստուածաբանութեան ուսանողների թիւը հասնում է 356, իրաւաբանութեանը — 990-ի, բժշկականութեանը 346, փիլիսոփայութեանը — 1083։

Ի դէպ է մեզ այս տեղ մի քանի խօսք ասել ուսանողաց կենաց վերայ։ Ուսանողաց դասը այս տեղ՝ ինչպէս և ամբողջ Գերմանիայում՝ ներկայացնում է մի օտարոտի երիտասարդութիւն։ Նոքա ժողովուելով ըստ մեծի մասին ուրիշ քաղաքներից, ուստի և բացակայ գտնվելով ծնողաց տեսչութիւնից, իրենց ուսանողական ժամերը վարում են սանձարձակ աղատութեամբ։ Խօսքս հարուստների վերայ է. իսկ աղքատ կամ միջին կարողութեան տէր մարդիկ՝ի հարկ է ստիպուած պիտի սանձահարեն իրենց երիտասարդական կրքերը և փախուստ տան առաջինների ընկերակցութիւնից։ Դոքա բաժնուած են զանազան խմբերի, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր սեպհական որոշիչ անունն ու նշանը։

digitised by A.R.A.R.@

Այս վերջինս բաղկացած է լինում առ հասարակ կամ գյնղգյն երիտներից, որ իրենց ճիտն են ձգում, կամ թէ համաձեւ, համագյն գտակներից։ Այսպէս իւրաքանչիւր համալսարանի մէջ գտնվում են 10 ից մինչև 15 խումբեր, որոնցից կան՝ որ ուսումնական, կան՝ որ երգեցիկ կամ երաժիշտ խումբեր են. իսկ կան և այնպիսիները, որոնց գլխաւոր նպատակն է պատիւ պաշտպանելը և արնիւ մնալով զրկանք հասուցանողին 'ի մենամարտութիւն կոչել։ Այս վերջինը այնքան սովորական է դարձած, որ կան մինչեւ անգամ խմբեր, որոնցից մի մի անդամ շաբաթը մի անգամ պարտաւորուած պիտի մենամարտեն, թէ եւ ոչինչ շարժառիթ չը լինի անգամ։ Բայց աչքից չը պիտի թողնենք Գերմանացի ուսանողին և լաւագյն կողմերը. նա ամեն ընչի մէջ մեծ յարատեւութիւն ունի և մեծ ճշգրտութիւն։ Նա ինչ սիրով որ մենամարտում, երգում, զբաւորձանում ու գարեջուր է խմում, նոյն թարմութեամբ ու յամառութեամբ պարապում է իւր ուսումով։ Եւ եթէ դորա վերայ յաւելյանենք այն անթիւ յարմարութիւնները, հիմնաւոր նախապատրաստութիւնն ու ազգային դպրութեան անբաւ հարստութիւնը, այն ժամանակ հասկանալի կը լինի մեզ այն ստուար յառաջադիմութիւնն ու գերազանցութիւնը, որ Գերմանացին ցոյց է տալիս օտարազգի երիտասարդաց նկատմամբ։

Գերմանիայի համալսարանները առ հասարակ ու Լէյպցիկինը 'ի մասնաւորի բաժանվում են 4 ֆակուլտէտ, այն է 1) Աստուածաբանական. 2) Իրաւաբանական, 3) Բժշկական և 4) Իմաստասիրական։ Այս վերջինս բաժանվում է եօթն մասնագիտութեանց, այն է Ա.) Զուտ իմաստասիրութիւն կամ փիլիսոփայութիւն. Բ.) Լեզուագիտութիւն, որ դարձեալ երեքի է բաժանվում, արեւելեան ու նոր լեզուագիտութեանց. Գ.) Պատմութիւն և աշխարհագրութիւն. Դ.) տեսական արուեստագիտութիւն. Ե.) քաղաքական և վիճակագրական տնտեսութիւն։ Զ.) Համարողութիւն և Աստեղաբաշխութիւն. Է.) 'ի վերջոյ — Բնագիտութիւն։ Սրանից պարզ տեսնվում է, որ Գերմանիայում գիտութիւնները շատ մասների են վերածած, քան Ռուսաստանում. մինչդեռ Ռուս. համալսարաններն ունին միայն 4—6 մասնագիտութիւն։ Գերմանիայինը տալիս է մեզ 12։ Եւ այս է, մեր կարծիքով, այն մեծակշիռ պատճառներից մէկը, որ առ հասարակ Գերմանացի ուսանողը առաւել խոր է մտած լինում առարկայի մէջ, քան Ռուսաստանցին. վասն զի գիտութիւնքը քանի գնում բաղմանում են և նրանցից ամեն մէկի գրականութիւնը լաւ սեպհականացընելու համար հարիւր թէ բաւական լինի մարդոյս կեանքը։ Չը կան այս աեղ տարեկան հարցաքննութիւններ. որոշուած է միայն թէ ինչ առարկաներ և քանի վեցամեակ պիտի լսէ ուսանողը մի ինչ և իսկ մասնագիտութիւն ուսումնասիրելու համար։ Ծառայութեան իրաւունք ստանալու համար ուսանողը պարտաւոր է տէրութենական կոչուած հարցաքննութեան (Staatsexemen) ենթարկուիլ, որ խիստ է և մեծաւ մասամբ գրաւոր։ Իսկ առաւել բարձր իրաւունք ստանալու համար ուսումնասէր պատանին պիտի ներկայացնէ մի գիտնական հեղինակութիւն, զոր եւ պիտի պաշտպանէ նա պրոֆեսսորական կաճառի առաջ։ Յաջող դիպուածում նա ստանում է դոկտոր պատուանուն և իրաւունքը։ Սա հա այդ դոքտորներն ունին իրաւունք

digitised by A.R.A.R.@

ծառայութեան բարձր պաշտօններ ստանալու. իսկ իրանց հեղինակութեամբ առաւել հաշակաւորուածները — պրոֆեսսոր լինելու։ Ամեն մի դոքտորական ատիճան ստացող պարտաւոր է վճարել յօգուտ համալսարանին 200_400 թալեր։ Եթէ պատահում է, որ մէկը ցանկանում է դիպն պատուանուն ունենալ առանց ծառայութեան իրաւունքի, նա՝ ներկայացնելով բոլոր դասախօսութեանց լսած լինելու վկայագիրը և պարտադրեալ 200_400 թալերը՝ ենթարկվում է մի թեթեւ քննութեան և ստանում իւր դոքտոր պատուանունը։ Այդ մեզ փոքր ինչ խորթ կը թուայ, բայց Գերմանացուն համար շատ հասկանալի է. դա կապուած է նորա անցած օրերի հետ, նորա պատմական կեանքի հետ։

Աստուածանութիւնը, ֆիլոսոֆականութիւնը, աննշան տերութիւնքը իրանց անհամար շքագիրներով ու ծառաներով, մշտական զօրքը և այլն և այլն միմեանց յաջորդելով՝ դարերով կրթում. փարթամեցնում, շռայլեցնում ու բաժանում էին ժողովրդեան մի փոքրագոյն արտօնաւորուած մասը միւս մեծագոյն մասից, որ ստրուկ էր առաջինի ձեռին, որ աղքատ էր և ամենայն զրկանքների ենթարկուած։ Արտօնաւորուած դասակարգերը. ցածութիւն համարելով ընկերակից լինել կամ հաւասարուիլ սինլքորներին, բնականապէս ամենայն կերպիւ ձգնում էր հեռի մնալ նորանից։ Ժամանակի ընթացքի հետ զարգանալով զարգացաւ այդ ուղղութիւնը և չը նայելով որ վերջին ժողովրդական շարժմանց ժամանակ ստորին դասի իրաւունքները փոքր ինչ բարձրացան, սակայն վերին դասակարգը դեռ եւս նոյն է։ Աւելորդ համարելով յառաջբերել բազմաթիւ փաստեր ու մանրակիտ քննութիւններ, ակնյայտնի ցոյց տալու համար ինչքան թանկ է ծախում Գերմանացին իւր պատուանունը, մենք շտապում ենք յառաջ բերելով միայն այս իրողութիւնը, որ բացի այն, որ մարդոյ սեպհական անունը կորչում է նրա պատուանուան մօտ, այլ և ամուսնոյ պատուանունը անցնում է և նրա կնոջ. օրինակ՝ ձեր անունը Աշոտ Բագրատեան է և դուք տանտէր էք, Գերմանացին ձեզ չի կոչիլ ձեր սեպհական անունով, այլ միայն պարոն պանապէպ, այսպէս և պ. Բժիշկ. պ. դոքտոր և այլն. այդպէս և ձեր կնոջ՝ եթէ ունիք՝ Գերմանացին առանց նրա սեպհական անունը տալու կոչելու է պիկին պանապէպ, պիկին Բժիշկ. պ. դոքտոր, թէև ձեր կինը ոչ մի այբ ու բէն չիմանար։ Այժմ կարծեմ հասկանալի է թէ ինչպէս Գերմանիայի համալսարանները օգուտ քաղելով իւր ազգի փոքրամասերի թալ ու միանգամայն նուաստ կողմից, իրան համար արդիւնաբեր աղբիւր է շինել այդ. այժմ հասկանալի է թէ ինչու և ինչպէս շատ անգամ լրագրերի մէջ կարդում ենք յայտարարութիւններ թէ այս ինչ համալսարանը ծախում է ամենայն ֆակո-լտէտի վերաբերեալ դոքտորական վկայագրեր։

Լէյպցիկ. Ա. Բահաթրեանց։

digitised by A.R.A.R.@

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յայտնի է, որ մեր Ազգային Նահապետական կենաց զօրութիւնն օր աւուր կը նուազի. իսկ մեր Ազգային Դպրոցներն չունին այն հիմնաւոր կրթութեան ընթաց քն ու ուղղութիւնն, որովհետ սերունդն կարող լինի իւր Նախահարց Նահապետական զօրութեան փոխարէն ունենալ գիտութեան եւ ճշմարիտ քաղաքակրթութեան զօրութիւն։ Մենք ստիպուած ենք ուրեմն Եւրոպական յառաջադէմ Ազգաց կրթութենէն օգուտ քաղել՝ նոյն իսկ տեղական Դպրոցներուն մէջ։ Բայց տարակոյս չը կայ, որ մեր մանուկներն աւելի կ'օգտին Եւրոպական կրթութենէն, երբ խնամատար հսկողութեան ներքեւ գտնուին եւ հանրական գիտութեանց ուսման հետ՝ մայրենի լեզուի և կրօնի ուսումն եւս շարունակեն։

Սոյն գովանի խորհրդովահան Մեծ. Իփէկճեան Էֆէնտի, Զուիցերիոյ Լոզան քաղաքի մէջ բնակութիւն հաստատելով, հետեւեալ Յայտարարութիւնն կ'առաջարկէ ունեւոր Հայ ծնողաց եւ բարերար Ազգայնոց, որք փափաք ունին իրենց զաւակներն կամ որդեգիրներն Զուիցերիոյ Դպրոցներն ղրկել։

"Ամեն Հասակի աշակերտ կ'ընդունիմ, և իւրաքանչիւրը՝ իւր հասակին ու ընդունակութեանց համեմատ՝ տեղւոյս բարեկարգ վարժարաններէն մէկը կը դնեմ։ Կը հսկեմ անոնց յաջողութեանը վրայ, և մասնաւոր խնամք կը տանիմ անոնց ֆիզիքական և բարոյական կրթութեանը։

Փափաքողաց կ'աւանդուի Հայերէն, Հայոց պատմութիւն և կրօնագիտութիւն. նոյնպէս և Տաճկերէն, եթէ դէթ 5 աշակերտ ըլլայ։

Ամեն ամսագլուխ աշակերտաց վարուց և յառաջադիմութեանը վրայ վերկայական կը խրկեմ ծնողաց։

Տարեկան թոշակն է 2,300 ֆրանք, վեցամսեայն կանխիկ վճարելի։ Վաքանսի համար ղեղջ չըլլար։

Եթէ աշակերտի մը հրաժարիլն երեք ամիս առաջ իմացուցած չըլլան, եռամսեայ թոշակ կը պահանջուի ղեկուցման օրէն հաշուելով։

Հագուստ, ճերմակեղէն, դպրոցական պիտոյք (գիրք, տետրակ, և այլն) եւ մանրածախք (ջրջապտութիւն, և այլն) ծնողաց վրայ է։

Աշակերտ խրկող ծնողք ներկայ պայմաններս ընդունած կը համարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն ստանալու համար լինձ դիմելու է հետեւեալ հասցէով.

3/15 Նոյեմբեր 1875

ԼՕԶԱՆ

Lausanne-Suisse
H. Ipekdgian
Rue Haldimand, 5, au 2ième.

Յ. Գ. Յանձն կ'առնում նոյնպէս և աշակերտուհիք ընդունիլ՝ պատուաւոր ընտանեաց մէջ կամ աղջկանց վարժարանները դնելու համար, վարժապետ և վարժուհի գտնել թէ մասնաւոր ընտանեաց և թէ վարժարանաց համար, և կրթութեան վերաբերեալ ամեն յանձնարարութիւնք կատարել"։

digitised by A.R.A.R.@

ՄԱՀԱԳՈՅԺ

Ս. Ուխտիս միաբանական անդամներէն առ Տէր փոխեցան Աբրահամ Վարդապետ Կ. Պոլսեցի կոկորդի ցաւով. Նազարէթ Զէյթունցի, ժառանգաւոր աշակերտ, Թոքախտի հիւանդութեամբ.

Յարութիւն վարդապետ Մարսուանցի կաթուածի հարուածով. Գէորգ Թիֆլիզեցի սաստիկ ծերութեան բնական տկարութեամբ մարմնաւոր ուժոյ և կազմուածոյ, քանզի մօտ հարիւր տարեկան էր։

Հանգուցեալներէն Աբրահամ Վարդապետն Ս. Փրկչի Վանուց և Ս. Աստուածածնի Տաճարի տեսչութեան պաշտօնի մէջ վախճանեցաւ. Նազարէթ մանուկն աշակերտական մեղուաջան աշխատութեան և գովանի յառաջադիմութեամբ. Յարութիւն վարդապետն և Գէորգ Թիֆլիզեցին պաշտօնէ դադրած էին, բայց երկոքեան ևս երկար տարիներ աշխատած են Ս. Վանուցս մէջ. առաջինն տեսչութեան և ժամատացութեան պաշտօններ կատարած է. իսկ երկրորդն, բաց 'ի ուրիշ մասնաւոր պաշտօններէ, քառասուն տարի անընդհատ Ս. Ծննդեան Տաճարի լուսարարութեան պաշտօնն վարած է։

Աստուած լուսաւորեսցէ իրենց հոգին, վարձատրեսցէ իրենց աշխատանքն և Միաբանական Ուխտս մխիթարեսցէ հոգւով մխիթարութեան. ամէն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Սիոնի նախորդ թուով բաւական ընդարձակօրէն խօսած էինք Ս. Բեթլէհեմի եկեղեցւոյ աւելածութեան խնդրոյ մասին։ Արդէն գուշակած էինք, որ Յոյնք ամեն տեսակ նենգ միջոցներ գործ պիտի դնեն մեր սեփական տեղիքն աւելն արգիլելու համար։ Այսպէս իսկ կատարուեցաւ։ Ամսոյս 2ին երբ մեր Բեթլէհեմի վանուց Տեսուչ Արժ. Եղիա վարդապետն միաբաններով հանդերձ ինքաւ Ծննդեան Ս. Այրի մեծ Եկեղեցւոյ մեր սեփական մասն աւելու. և երբ աւելածութիւնն արդէն բաւականին յառաջ գնացած էր, Յունաց միաբանութիւնն սկսաւ ներս խուժել և յարձակիլ մեր միաբանից վերայ։ Մեր միաբաններն բնաւ յետ չը կասեցան, այլ շարունակեցին աւելել. և այն ինչ աւարտելու վերայ էին, և

digitised by A.R.A.R.@

միայն մի լուսամուտ մնացած էր, Յոյնք սկսան փայտեայ մամակալներն իբրեւ բիր գործ դնելով՝ մեր միաբանից վերայ յարձակիլ։ Երկուստէք բաւականին գանակոծութիւնք եղանելոյց դժբաղդաբար մեր Արժ. Տեսչի գլուխն սաստիկ վիրաւորեցաւ, եւ Միւտիրն վերայ հասնելով՝ դադարու